

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ավագանու
2022 թվականի նոյեմբերի 17-ի 218-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

Ա Խ ՈՒ Ր Յ Ա Ն Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ



ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ԱԽՈՒՐՅԱՆ 2022թ.

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք.....	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն.....	4
2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն.....	4
2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը.....	24
2.3 Ծրագրերի առաջնահերթությունների որոշումը.....	95
2.4 Համայնքում իրականացվող ծրագրերը.....	135
2.5 Պատվիրված ծառայություններ.....	137
2.6 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ.....	139
2.7 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ.....	143
2.8 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն.....	144
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում.....	146
3.1 Համայնքի զարգացման տեսլական.....	146
3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ.....	151
4. ՀՀԶԾ ֆինանսավորում.....	152
5. ՀՀԶԾ մոնիթորինգի անձնագիր.....	161
Հավելված 1.....	169
Հավելված 2.....	229
Հավելված 3.....	231

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Ներկայացվող ՀՀԶԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Ախուրյան համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է ՀՀԶԾ-ի մշակմանը մասնակից համայնքի բնակավայրերի աշխատանքային խմբերի կողմից կատարված աշխատանքով և առաջարկներով, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ, ինչպես նաև այն իրողությամբ, որ համայնքը ձևավորվել է ՀՀ կառավարության կողմից համայնքների խոշորացման պետական ծրագրի իրականացմամբ և գտնվում է ՀՀ կառավարության, միջազգային դոնոր կազմակերպությունների ուշադրության կենտրոնում և այս առումով մեծացել են համայնքի զարգացմանը և առկա խնդիրների լուծմանը նրանց ներգրավելու հնարավորությունները: ՀՀԶԾ-ն մշակվել է մասնակցային եղանակով՝ հաշվի առնելով համայնքի շահագրգիռ բոլոր կողմերի առաջարկությունները: Հանրային բաց լսումների միջոցով վեր են հանվել համայնքի բնակիչներին հուզող խնդիրները, դրանք գնահատվել են բնակավայրային ժողովների ժամանակ և դասակարգվել ըստ առաջնահերթության: Այսպիսով ուղենշվել են Ախուրյան համայնքի առաջիկա 5 տարիների զարգացման տեսլականը, զարգացման հիմնական ուղղությունները, գերակա ոլորտները: Համայնքի տեսլականն է՝ լինել առաջատար համայնք, ապահովելով բնակավայրերի սոցիալ-տնտեսական հնարավորությունների զարգացումն ու ընդլայնումը, հասնել զբաղվածության միջին մակարդակի: Ապահովել համայնքի պարտադիր խնդիրների կատարումը, բնակչության կեսամակարդակի բարձրացումը: Զարգացման հիմնական ուղղություններն են՝

- Ապահովել համայնքի կազմի մեջ մտնող բոլոր բնակավայրերի՝ համաչափ զարգացումը
- Տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման, ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման արդյունավետ քաղաքականություններ
- Ստեղծել և մատուցել ոչ ֆորմալ կրթական ծառայություններ Ախուրյան խոշորացված համայնքի 3 բնակավայրերի 6-18տ 350 երեխաների համար
- Մշակել և ներդնել համայնքում գյուղատնտեսության և բիզնեսի աջակցության ծառայություն՝ նվազեցնելով աղքատությունը
- Նպաստել համայնքում տարեցների և հատուկ կարիք ունեցող բնակիչների խնամքի, սոցիալ-հոգեբանական և առողջապահական ծառայությունների ապահովմանը, տեղերում՝ ապահովելով շրջիկ ծառայություն:
- Նպաստել խոցելի խմբերի (հատուկ կարիք ունեցողներ, կանայք, տարեցներ) անդամներին արհեստագործական մասնագիտական հմտությունների ձեռքբերմանը, բավարարելով աշխատաշուկայի պահանջները
- Խթանել ձեռներեցությունը՝ այն սերտորեն կապելով համայնքի տնտեսական զարգացման հետ
- Պահպանել համայնքի պատմամշակութային ժառանգությունը, բացառելով դրանց վնասումը կամ ոչնչացումը, ինչպես նաև ինքնակամ շինարարությունի իրականացումը և ապօրինի հողազավթումները
- Խթանել համայնքային տարբեր շահագրգիռ կողմերի, դոնոր կազմակերպությունների, հասարակական և բարեգործական կազմակերպությունների, անհատների նախաձեռնությունները և նրանց ներգրավմամբ հետևողականորեն իրականացնել բարեփոխումներ՝նպաստելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը

- Սերտորեն համագործակցել համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության լրատվամիջոցների և գործարարների հետ,
- Նպաստել համայնքում աշխատատեղերի ընդլայնմանը՝ ռացիոնալ օգտագործելով բնական ռեսուրսները, զարգացնելով առևտրի և սպասարկման ոլորտն ու գյուղատնտեսությունը

Համայնքի իրավիճակի վերլուծության արդյունքում վեր են հանվել համայնքի առջև ծառացած մի շարք ընդհանուր հիմնական խնդիրներ, որոնք ամփոփ կերպով ներկայացված են ստորև.

- ✓ Ներհամայնքային և ներբնակավայրային ճանապարհների բարեկարգում,
- ✓ Համայնքի որոշ բնակավայրերում գազամատակարարման բացակայություն
- ✓ Գիշերային լուսավորության լուսատուների ավելացում տեղադրում,
- ✓ Խմելու ջրի ցանցի վերանորոգում,
- ✓ Կանաչապատ և ծաղկապատ տարածքների ավելացում, զբոսայգիների, խաղահրապարակների, հանգստյան գոտիների ավելացում,
- ✓ Ոռոգման համակարգի անբավարար վիճակ,
- ✓ Համայնքի խնդիրների լուծման գործընթացում բնակչության ներգրավվածության ցածր մակարդակ,
- ✓ Գյուղմթերքների իրացման դժվարություններ,
- ✓ Որոշ վարչական նստավայրերում շենքային և գույքային անբավարար պայմաններ,
- ✓ Կանգառների բացակայություն,
- ✓ Առողջության առաջնային կենտրոնների և ամբուլատորիաների շենքային և գույքային անբավարար պայմաններ,
- ✓ Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների շտաբի սենյակի հիմնում և գույքով համալրման անհրաժեշտություն,
- ✓ Արոտավայրերում ջրելատեղերի (ջրախմոցեր և խողովակաշար) վերանորոգման և կառուցում,
- ✓ Դաշտավարության բնագավառում գյուղտեխնիկայի ձեռքբերման անհրաժեշտություն,
- ✓ Համայնքում մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանման և ընդլայնման անհրաժեշտություն,
- ✓ Գերեզմանատների ցանկապատերի անբարեկարգ վիճակ,

Զարգացման հիմնական խոչընդոտներ են հանդիսանում ֆինանսական միջոցների սակավությունը առանձին թիրախային խնդիրների լուծման համար, համայնքում համապատասխան որակավորում ունեցող մասնագետների բացակայությունը, ենթակառուցվածքների ոչ բավարար վիճակը, տեղական ինքնակառավարմանը մասնակցելուն բնակչության ցածր շահագրգռվածությունը:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2021 թվականի սեպտեմբերի 24-ին ընդունված «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի/ՀՕ 328-Ն/ համայնքների միավորման արդյունքում ձևավորվել է Ախուրյան բազմաբնակավայր համայնքը: Այսպիսով, ներկայումս Ախուրյան համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերն են՝ Ախուրյան, Ազատան, Մարմաշեն, Վահրամաբերդ, Կապս, Հովունի, Քեթի, Փոքրաշեն, Հացիկ, Շիրակ, Զաջուռ, Կարմրաքար, Լեռնուտ, Մեծ Սարիար, Կրաշեն, Զաջուռավան, Մայիսյան, Արևիկ, Այգաբաց, Հովիտ, Բասեն, Կամո, Կառնուտ, Զրառատ, Հայկավան, Առափի, Ոսկեհասկ, Երազգավորս, Ախուրիկ, Բայանդուր, Բենիամին, Գետք, Ղարիբջանյան, Հացիկավան,

Նոր Ախուրյան համայնքների: Համայնքի կենտրոնի՝ Ախուրյան բնակավայրի, հեռավորությունը մայրաքաղաքից կազմում է 126 կմ, մարզկենտրոնից՝ 3 կմ:

Աղյուսակ 1. Համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերի հեռավորությունը համայնքի կենտրոնից,

մարզկենտրոնից և բարձրությունը ծովի մակերևույթից

Հ/Հ	Բնակավայրի անվանումը	Բնակավայրի հեռավորությունը համայնքի կենտրոնից	Բնակավայրի հեռավորությունը համայնքի մարզկենտրոնից	Բնակավայրի բարձրությունը ծովի մակերևույթից
3.41	Ախուրյան	0	3	1556
2	Ազատան	10	5	1510
3	Մարմաշեն	15	7	1620
4	Վահրամաբերդ	16	10	1650
5	Մայիսյան	12	6	1660
6	Այգաբաց	7	10	1600
7	Արևիկ	4	7	1500
8	Բասեն	9	15	1690
9	Կամո	17	12	1700
10	Կառնուտ	7	10	1570
11	Հովիտ	9	12	1660
12	Ջրառատ	16	20	1950
13	Կապս	20	12	1700
14	Հովունի	25	13	1750
15	Քեթի	15	10	1750
16	Փոքրաշեն	20	14	1900
17	Հացիկ	13	6	1650
18	Շիրակ	9	7	1650
19	Ջաջուռ	16	14	1800
20	Կարմրաքար	13	8	1800
21	Լեռնուտ	19	14	1830
22	Մեծ Սարիար	20	15	1905
23	Կրաշեն	16	18	1880
24	Ջաջուռավան	22	15	1800
25	Ախուրիկ	10	6	1428
26	Հայկական	16	12	1580
27	Առափի	11	5	1500
28	Երազգավորս	15	12	1520

29	Ոսկեհասկ	13	9	1500
30	Բայանդուր	17	12	1480
31	Բենիամին	12	15	1540
32	Գետք	15	10	1500
33	Ղարիբջանյան	9	4	1600
34	Հացիկավան	14	7	1660
35	Նոր Ախուրյան			

ԱՆՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը -2846.38 հա, բնակչությունը – մարդ 9194

Ախուրյանի շրջանը գտնվում է Շիրակի դաշտի կենտրոնական մասում, հյուսիսում Շիրակի արևելքում Փամբակի լեռնաշղթան է: Բարձրությունը 1500-2256 մ է (Եզնասար լ.): Մակերևույթը հարթ է, անտառազուրկ: Գերակշռում է լեռնատափաստանային լանդշաֆտը: Հարուստ է հանքային շինանյութերով, կա նաև գորշ ածուխ: Կլիման բարեխառն է: Արևմուտքով հոսում է սահմանային Ախուրյան գետը: Գործում են Ախուրյանի աջափնյա, Շիրակի, Կապսի ջրանցքները, Կառնուտի և Ջաջուռի ջրամբարները: Ախուրյան գետի վրա գործում են Լենինականի հիվն.ջրհան կայաններ: Տնտեսության առաջատար ճյուղերն են թեթև, շինանյութերի և սննդի արդյունաբերությունը, դաշտավարությունն ու անասնապահությունը: Գյուղատնտեսության առաջատար ճյուղերն են՝ հացահատիկի, շաքարի ճակնդեղի մշակումը և տավարաբուծությունը: Ջաջուռում է Մինաս Ավետիսյանի տուն-թանգարանը: Մեծ է եղել ախուրյանցու ավանդը հայրենի երկրի զարգացման գործում: Ախուրյանը անմասն չի մնացել նաև Արցախյան պատերազմին, նրա զավակները 14-ը անմահացան կատարած սխրանքներով՝ լույս սփռելով գալիք սերնդի ճամփաներին:

ԱՅԳԱՐԱՑ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը -1857.10 հա, բնակչությունը – մարդ 721

Գյուղը գտնվում է Շիրակի դաշտում, բլրապատ հարթավայրում՝ ծովի մակարդակից 1600մ բարձրության վրա: Գտնվում է մարզկենտրոնից՝ 10 կմ հարավ-արևելք: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Բնակչությունը զբաղվում է հացահատիկային, բանջարաբուստանային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ: Զբաղվում են նաև անասնապահությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ: Բնակավայրի հիմնախնդիրների մեջ կարևորվում են ոռոգման ցանցի վերակառուցումը, մշակույթի տան վերանորոգումը, ներքնակավայրային ճանապարհների բարեկարգումը, լուսավորության ցանցի ընդլայնումը, Հայրենական Մեծ պատերազմի հուշարձանի վերանորոգումը: Այգաբացում կանգուն է XIX դարի Սուրբ Գևորգ եկեղեցին:

ԱՐԵՎԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը – 1580.52 հա, բնակչությունը – մարդ 1785

Շիրակի մարզի Արևիկ գյուղը գտնվում է մարզկենտրոն Գյումրիից հարավ արևելք, ծովի մակերևույթից 1500մ բարձրության վրա: Մարզկենտրոնից հեռավորությունը 7կմ է, մայրաքաղաքից՝ 125 կմ: 1843թ. գյուղը ձեռնամուխ է լինում Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շինարարությանը, որը տևում է գրեթե կես դար: Այս

գործում մեծ ներդրում ունի արևիկիցի բանասեր, հայագետ, թարգմանիչ Բարսեղ Սարգսյանը, որը եղել է Մխիթարյան միաբանության տպարանապետը: Գյուղի ապրուստի հիմնական միջոցներն են հողագործությունը, անասնապահությունը և արտագնա աշխատանքը: Արևիկն ունի նոր շրջանում կառուցված Սբ. Հակոբ մատուռ:

ԲԱՍԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը-4587.46 հա, բնակչությունը – մարդ 1722

Գյուղը տեղադրված է Փամբակի լեռնաշղթայի փեշերին, մեղմաթեք սարալանջին՝ ծովի մակարդակից 1645 մ բարձրության վրա: Հեռավորությունը մարզկենտրոնից 15 կմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են այգեգործությամբ, ծխախոտագործությամբ, հացահատիկային, կերային, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Ունի դպրոց, մանկապարտեզ: Մշակութային հաստատություններ - մշակույթի տուն (չի գործում): Մարզական հաստատություններ մարզադահլիճ: Բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն ու անասնապահությունն է: Ունի կիսակառույց եկեղեցի:

ԿԱՄՈ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը -2418.08հա, բնակչությունը – մարդ 1455

Կամո բնակավայրը գտնվում է Շիրակի մարզի հյուսիս-արևելյան հատվածում, ծովի մակերևույթից 1700 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն է, զգալի է բրիզների ազդեցությունը: Խոշոր գետը Գավառագետն է: Բնակավայրի հեռավորությունը մարզկենտրոնից 12կմ է: Բնակչությունը հիմնականում զբաղվում է երկրագործությամբ և անասնապահությամբ: Մշակում են հացահատիկային և բանջարաբոստանային կուլտուրաներ, կարտոֆիլ, զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնապահությամբ: Գյուղի հարավային մասում 1.5կմ հեռավորության վրա է գտնվում Անտիկ բնակատեղի և դամբարանադաշտի տարածքը, որը թվագրում է մ.թ.ա. 2-1 հազարամյակը: Այժմ գյուղում գործում է քարաշեն միջնակարգ դպրոցը, փոստը, տնակային պայմաններում գործում են գրադարանը, բուժկետը և գյուղապետարանը:

ԿԱՌՆՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը -1936,24 հա, բնակչությունը – մարդ 1015

Կառնուտ բնակավայրը մարզկենտրոնից գտնվում է 10կմ հեռավորության վրա: Գյուղը տեղադրված է Փամբակի լեռնաշղթայի ստորոտում՝ քարքարոտ ձորում՝ ծովի մակարդակից 1570մ բարձրության վրա: Ունի ցուրտ կլիմա, սակավ տեղումներ: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Գյուղի հյուսիս-արևելքում պահպանվում է կիսավեր եկեղեցին, որը ենթադրվում է, որ հնագույն շրջանում եղել է հեթանոսական մեհյան, իսկ 4-5-րդ դարերում վերածվել է եկեղեցու: Ունի դպրոց, բուժկետ: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը հողագործությունն է: Մշակում են հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաներ, պտուղներ: Կառուցված է Կառնուտի ջրամբարը:

ՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը -1642,00հա, բնակչությունը – մարդ 551

Հեռավորությունը մայրաքաղաքից 130 կմ: Հեռավորությունը մարզկենտրոնից 12 կմ: Գտնվում է ծովի մակարդակից 1670մ բարձրության վրա: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ և անասնապահությամբ: Բնակչության հիմնական զբաղմունքը անասնապահությունն,ու հողագործությունն է: Հովիտում կա XIX դարի Սբ. Աստվածածին եկեղեցի:

ՋՐԱՌԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը -5622,18 հա, բնակչությունը – մարդ 1043

Գտնվում է Փամբակի լեռնաշղթայի Հարսնաքար 2483մ լեռնաճյուղի արևմտյան լանջին, Ջրառատ գետի վերին հոսանքի ավազանում, ծովի մակերևույթից 1900մ բարձրության, Ախուրյանից 16 կմ, Գյումրի քաղաքից 20 կմ մայրաքաղաքից, 135 կմ հեռավորություն վրա է: Բնակավայրում գործում է Ջրառատի միջնակարգ դպրոցը: Բնակչության հիմնական զբաղմունքն անասնապահությունն ու հողագործությունն է: Գյուղում պահպանվել է 6-րդ դարում կառուցված, դրսից ուղղանկյուն գմբեթատակ ունեցող եռախորան սբ.Մինաս եկեղեցու ավերակներ:

ՄԱՅԻՍՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը -2062,73 հա, բնակչությունը – մարդ 1634

Գյուղը գտնվում է Շիրակի դաշտում, մեղմաթեք հարթավայրում՝ ծովի մակարդակից 1660մ բարձրության վրա: Ունի սև տուֆի պաշարներ, որոնք ունեն արդյունբերական նշանակություն: Գյուղում գտնվում է 7-րդ դարի Տիրանավոր ս. Աստվածածին եկեղեցին: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնապահությամբ, թռչնապահությամբ, մեղվապահությամբ:

ԿԱՊՍ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը -812.44հա, բնակչությունը – մարդ 721

Գյուղը գտնվում է մարզկենտրոնից 12կմ հեռավորության վրա և ծովի մակերևույթից բարձր է 1700մ: Սկզբում գյուղացիները բնակվել են ներկայիս Կապսի տարածքից ոչ հեռու գտնվող տարածքում և զբաղվել են անասնապահությամբ և ձկնորսությամբ: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի, կերային կուլտուրաների, շաքարի ճակնդեղի մշակությամբ և անասնապահությամբ: Կապսում են գտնվում «Ժամ» եկեղեցին, «Սրբի սար» և «Սրբատեղ» մատուռները:

ՋԱՋՈՒՌ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը -2416.21հա, բնակչությունը – մարդ 779

Գյուղը գտնվում է Շիրակի լեռնաշղթայի արևմտյան ստորոտում՝ ծովի մակարդակից 1700 մ բարձրության վրա: Ունի ցուրտ կլիմա, սակավ տեղումներ: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ:Գտնվում է մարզկենտրոնից 12 կմ հեռավորության վրա: Գյուղում կա՝ միջնակարգ դպրոց, մշակույթի տուն, գրադարան, պոլիկլինիկա, արհեստական ջրամբար: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Կառուցվել է Զաջուռի թունելը 2 կմ երկարությամբ:

ՋԱԶՈՒՌԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ /ՋԱԶՈՒՌ ԿԱՅԱՐԱՆ/

Վարչական տարածքը -26.11հա, բնակչությունը – մարդ 202

Ջաջուռավան բնակավայրը գտնվում է ՀՀ հյուսիս-արևելքում: Գյուղը մարզկենտրոնից հեռու է 15 կմ: Այստեղ գործել է կրի գործարանը, որը որակյալ կիր է մատակարարել, ինչպես խորհրդային միության, այնպես էլ տեղի շինարարական կազմակերպություններին: 2006 թվականից գյուղը վերանվանվեց Ջաջուռավան: Բնակչության մի մասը զբաղվում է երկաթուղու սպասարկմամբ, իսկ մյուսները՝ անասնապահությամբ և բանջարաբուծությամբ:

ԿՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը -1340.30հա, բնակչությունը – մարդ 267

Գյուղը մարզկենտրոնից գտնվում է 18կմ հեռավորության վրա: Գյուղը գտնվում է Շիրակի լեռնաշղթայի հարավային փեշերին՝ ծովի մակարդակից 1880մ բարձրության վրա: Գյուղի տարածքում գտնվում է 1859 թ-ին կառուցված ս. Աստվածածին եկեղեցին: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային, բանջարաբուստանային կուլտուրաների մշակությամբ:

ԿԱՐՄՐԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը -941.24հա, բնակչությունը – մարդ 39

Գյուղը մարզկենտրոնից գտնվում է 8կմ հեռավորության վրա: Գյուղը գտնվում է Շիրակի դաշտում՝ քարքարոտ վայրում՝ ծովի մակարդակից 1800մ բարձրության վրա: Գյուղի տարածքում գտնվում են երկու ավերակ եկեղեցիներ: Մոտակայքում կան նախաքրիստոնեական ժամանակների ամրոցի հիմնապատերը, գերեզմաններ և այլ շինություններ: Գյուղատնտեսական հողատարածքները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային, բանջարաբուստանային կուլտուրաների մշակությամբ:

ԼԵՌՆՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը-879.60հա, բնակչությունը – մարդ 157

Գյուղը մարզկենտրոնից գտնվում է 12կմ հեռավորության վրա: Գյուղը տեղադրված է Շիրակի լեռնաշղթայի փեշերին, բլրապատ տարածքում՝ ծովի մակարդակից 1830մ բարձրության վրա: Մոտակայքում ունի աղբյուրներ, որոնք ջրմուղով հասցվում են գյուղ և օգտագործվում որպես խմելու ջուր: Գյուղի շրջակայքում պահպանվել են հին ամրոց-բերդի ավերակներ, ունի կիսաքանդ եկեղեցի: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը կաթնամսատու անասնապահությունն է: Գյուղատնտեսական հողատարածքները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր: Զբաղվում են խոշոր եղջերավոր անասնապահությամբ, թռչնապահությամբ: Մշակում են հացահատիկային, բանջարաբուստանային, կերային կուլտուրաներ:

ՄԵԾ ՍԱՐԻԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը -2326.05հա, բնակչությունը – մարդ 382

Գյուղի բնակիչները զբաղվում են հիմնականում անասնապահությամբ և հողագործությամբ: Համայնքի հեռավորությունը մարզկենտրոնից 15 կմ է, ծովի մակերևույթից բարձրությունը՝ 1905 մ:

Բնակավայրն ունի լեռնային կարգավիճակ: Գյուղում կա «Գրիգոր Ավետարան» անունով մատուռ: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ:

ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը -819.62հա, բնակչությունը – մարդ 1438

Գյուղը մարզկենտրոնից գտնվում է 10կմ հեռավորության վրա: Գյուղը տեղադրված է Ախուրյան գետի ձախափնյա հովտում՝ ծովի մակարդակից 1650մ բարձրության վրա: Գյուղի շրջակայքում պահպանվել են Մարմաշեն վանական համալիրը, Վահրամաշեն ավերակ բերդը, Ախուրյան գետի վրա 13-րդ դարում կառուցված կամրջի մնացորդները: Ունի միջնակարգ դպրոց, գրադարան, մշակույթի տուն, բուժկետ: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը հողագործությունն է: Գյուղատնտեսական հողատարածքները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր: Զբաղվում են հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների, պտուղների մշակությամբ: Զբաղվում են խոշոր եղջերավոր անասնապահությամբ, թռչնապահությամբ:

ՄԱՐՄԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը -1400.76հա, բնակչությունը – մարդ 1897

Գյուղը մարզկենտրոնից գտնվում է 7կմ հեռավորության վրա: Գյուղի մոտով անցնում է Գյումրի-Աշոցք ավտոխճուղին և Շիրակի ջրանցքը: Գյուղը գտնվում է Ախուրյան գետի ձախափնյա հովտում, մեղմաթեք հարթավայրում՝ ծովի մակարդակից 1620մ բարձրության վրա: Գյուղի շրջակայքում է գտնվում Մարմաշեն վանական համալիրը և նրա շրջակա երեք եկեղեցիները: Գյուղի անվանումը կապված է վանքի անվան հետ: Վանքի գլխավոր կառույցը կաթողիկե ս. Ստեփանոս եկեղեցին է: Միջնադարում այն եղել է կրոնական և մշակութային կենտրոն: Շրջակայքում կան հին բնակավայրի, քարայր-բնակավայրեր: Մարմաշենից մոտ 2կմ արևմուտք ժայռի վրա գտնվում է ուրարտական թագավոր Արգիշտի Ա-ի արձանագրություններից մեկը: Մոտակայքում գտնվում են նաև Մարմաշենի բերդի ավերակները:

ՀՈՎՈՒՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը -846.45հա, բնակչությունը – մարդ 654

Բնակավայրը մարզկենտրոնից գտնվում է 13կմ հեռավորության վրա: Գյուղը գտնվում է Շիրակի դաշտում՝ Ախուրյան գետի աջ ափին՝ ծովի մակարդակից 1750մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Գյուղատնտեսական հողատարածքները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը հողագործությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնապահությամբ, թռչնապահությամբ:

ՔԵԹԻ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը -1753,05հա, բնակչությունը – մարդ 976

Քեթի գյուղը գտնվում է Շիրակի մարզի Ախուրյանի նախկին տարածաշրջանում՝ Երևան-Գյումրի-Վրաստան միջպետական ավտոճանապարհի վրա: Մարզկենտրոն Գյումրիից հեռավորությունը 10 կմ, Երևանից՝ 135 կմ: Բարձրությունը ծովի մակարդակից 1750մ: Գյուղում գործում է մեկ միջնակարգ դպրոց, բուժկետ, գրադարան, մանկապարտեզ: Պեղումների ժամանակ հայտնաբերվել են հնագիտական բարձր արժեք ներկայացնող նյութեր, որոնք պահպանվում են տարբեր թանգարաններում: Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ՝ ցորենի, գարու, առվույտի, կարտոֆիլի, կաղամբի, բանջարաբոստանային կուլտուրաների և մրգերի արտադրությամբ:

ՓՈՔՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը -746,16հա, բնակչությունը – մարդ 220

Գյուղը մարզկենտրոնից գտնվում է 14կմ հեռավորության վրա: Գյուղի տարածքում գտնվում է սբ. Հակոբ եկեղեցին: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը կաթնամսատու անասնապահությունն է: Հիմնականում զբաղվում են հացահատիկային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի, մշակությամբ:

ՀԱՅԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը -1213.42հա, բնակչությունը – մարդ 1020

Գյուղը մարզկենտրոնից գտնվում է 5կմ հեռավորության վրա: Գյուղը տեղադրված է Շիրակի մեղմաթեք դաշտում՝ ծովի մակարդակից 1650մ բարձրության վրա: Շրջակայքում կա հին եկեղեցի և գերեզմանոց, իսկ Հացիկ գյուղից 1 կմ հյուսիս-արևելք գտնվում է գյուղատեղի և սրբավայր: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, մշակույթի տուն: Գյուղատնտեսական հողատարածքները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է:

ՀԱՅԻԿԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Բնակչությունը – մարդ 36: Հացիկ գյուղից մոտ 1կմ հյուսիս-արևմուտք: Կայարանը կառուցվել է 1898 թվականին, 2006 թվականի հուլիսի 4ին վերանվանվել Հացիկավան: Բնակչությունը զբաղվում ավտոլաբուծությամբ և կերային կուլտուրաների մշակությամբ:

ՇԻՐԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը -1673,77հա, բնակչությունը – մարդ 1075

Շիրակ գյուղի հեռավորությունը մարզկենտրոնից 7կմ է: Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1650մետր բարձրության վրա: 1944թվականին գյուղը Ավետիք Իսահակյանի միջամտությամբ անվանվել է Շիրակ: Գյուղն ունի մագկենտրոնին միացնող մեկ ճանապարհ, որն անցանելի է տարվա բոլոր եղանակներին: Համայնքի տարածքում գտնվում է «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության Հացիկ- Ջաջուռ կայարանը: Համայնքի ջրամատակարարումն իրականացվում է Ղազանչի եւ Արտեգյան ջրաղբյուրներից: Գյուղի տարածքում գործում է մեկ ուսումնական հաստատություն՝ Շիրակի միջնակարգ դպրոցը, համայնքի տարածքով հոսում է Շիրակի ջրանցքը:

ԱԶԱՏԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը -3856.87, բնակչությունը – 5343 մարդ

Գտնվում է մարզկենտրոնից 8 կմ հարավ, մայրաքաղաքից 110 կմ հեռավորության վրա, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1490 մ է: Ազատանն ունի բարեխառն լեռնային կլիմա: Ձմեռները ցուրտ են և տևական: Ամեն տարի հաստատվում է կայուն ծնածածկույթ: Ամառները տաք են և համեմատաբար խոնավ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Գյուղի շրջակայքում կան ավազի, բազալտի պաշարներ, որոնք ունեն արդյունաբերական նշանակություն: Գյուղատնտեսական հողահանդակները ոռոգվում են Շիրակի ջրանցքի ջրերով: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են ավտոլաբուծությամբ, հացահատիկային, բանջարաբուստանային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ, մեղվաբուծությամբ և անասնապահությամբ: Համայնքում կան երկու եկեղեցիներ՝ Հայ Առաքելական և Կաթողիկե, որոնք վերանորոգվել և դարձել են գործող եկեղեցիներ: Համայնքում գործում է հանրակրթական դպրոց, արվեստի

դպրոց, մարզադպրոց, մշակույթի տուն, բուժամբուլատորիա, ինչպես նաև «Ազատան համայնքային կենտրոն» հասարակական կազմակերպությունը:

ԳԵՏՔ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը -921.0հա, բնակչությունը – մարդ 596

Գետք համայնքի տարածքը գտնվում է Շիրակի դաշտավայրի հարավ-արևմտյան մասում Արմավիր-Գյումրի խճուղու վրա, ծովի մակարդակից 1500 մետր բարձրության վրա: Բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաքից կազմում է 125 կմ, մարզկենտրոնից՝ 10 կմ: Մինջբնակավայրային ճանապարհներով իրար հետ կապված են Ղարիբջանյան, Երազգավորս, Ազատան բնակավայրերի հետ: Բնակավայրն ունի շատ կտրտվածության դաշտեր: Բնակլիմայական պայմանները փոփոխական են և ոչ բարենպաստ գյուղատնտեսության համար: Դաշտերը հիմնականում ոռոգելի չեն և բերքատվությունը մեծ կախում ունի տարվա տեղումներից:

ԵՐԱԱԶԳԱՎՈՐՍ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը -971.9հա, բնակչությունը – մարդ 1526

Երազգավորսը գտնվում է Շիրակի մարզի հարավ-արևմտյան մասում, սահմանակից է Թուրքիային: Բնակավայրը գտնվում է ծովի մակարդակից 1520մ բարձրության վրա: Հեռավորությունը մարզկենտրոնից 12կմ է: Գյուղի կլիման չափավոր ցուրտ է: Բնակավայրը սահմանակից է 3 բնակավայրերի վարչական տարածքների, դրանք են Բայանդուր, Գետք և Ախուրիկ բնակավայրերը: Բնակչությունը հիմնականում զբաղված է հողագործությամբ և անասնապահությամբ, որը հանդիսանում է նրանց եկամտի աղբյուրը: Մեծ է նաև արտագնա աշխատանքի մեկնողների թիվը: Բնակավայրը համարվում է սահմանամերձ:

ԲԵՆԻԱՄԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը -860.54հա, բնակչությունը – մարդ 709

Բենիամին բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաքից կազմում է 110 կմ, մարզկենտրոնից՝ 15 կմ, իսկ Երեվան-Գյումրի մայրուղուց՝ 1 կմ: Գյուղը գտնվում է Շիրակի մարզի հարավ-արևմտյան մասում: Գյուղի վարչական տարածքով հոսում է «Կարկաչուն» գետակը: Սահմանակից են՝ Ազատան, Սարատակ, Լուսակերտ, Գուսանագյուղ, Բայանդուր բնակավայրերը: Գտնվում է ծովի մակերևույթից 1300 մ բարձրության վրա: Գյուղի կենտրոնական մասում կա կառուցված եկեղեցի թվագրված 1870 թվական: Բնակլիմայական պայմանները փոփոխական են և երբեմն ոչ բարենպաստ գյուղատնտեսության համար: Վարելահողերը ջրովի են և բերքատվությունը մեծ կախում ունի տարվա տեղումներից: Գյուղի բնակիչները հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ:

ԲԱՅԱՆԴՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը -1143.0հա, բնակչությունը – մարդ 717

Բնակավայրը ծովի մակարդակից բարձր է՝ 1539մ: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Գյուղատնտեսական հողատարածքները ոռոգվում են Ախուրյան գետի ջրերով՝ ջրհան կայանի միջոցով: Մասնագիտացված ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են պտղաբուծությամբ հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ: Բնակավայրն համարվում է սահմանամերձ:

ՀԱՅԿԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը -1588.31հա, բնակչությունը – մարդ 1270

Հայկական գյուղը տեղակայված է Շիրակի դաշտավայրի հյուսիս-արևմտյան մասում: Գտնվում է համայնքի կենտրոնից 15 կմ, մարզկենտրոնից՝ 12 կմ և մայրաքաղաքից 130 կմ հեռավորության վրա: Ծովի մակերևույթից միջին բարձրությունը 1580 մետր է: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային, բանջարաբուստանային կուլտուրաների մշակությամբ, պտղաբուծությամբ (խնձոր, տանձ, բալ): Հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր և արոտավայրեր:

ՈՍԿԵՀԱՍԿ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը -1694.4 հա, բնակչությունը – մարդ 2006

Բնակավայրը գտնվում է Ախուրյան գետի աջ ափին, Շիրակի դաշտում՝ ծովի մակարդակից 1500մ բարձրության վրա: Ունի ցուրտ կլիմա, սակավ տեղումներ: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը հողագործությունն է: Գյուղատնտեսական հողատարածքները զբեղեցնում են ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր: Պետական հողերում մեծ տեսակարար կշիռ ունեն արոտավայրերը: Մշակում են հացահատիկային, բանջարաբուստանային, կերային կուլտուրաներ, պտուղներ: Զբաղվում են խոշոր եղջերավոր անասնապահությամբ, թռչնաբուծությամբ: 1967թ.-ից օգտվում է ինքնահոս Ղազանչի ջրագծից:

ԱՌԱՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը -1516.6 հա, բնակչությունը – մարդ 1697

Գտնվում է Ախուրյան գետի աջ ափին, ծովի մակարդակից 1500 մ բարձրության վրա: Մարզկենտրոն Գյումրիից հեռավորությունը մոտ 2կմ արևմուտք: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Գյուղատնտեսական հողատարածքները զբեղեցնում են ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են պտղաբուծությամբ, հացահատիկային, բանջարաբուստանային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ:

ԱԽՈՒՐԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը -918.0հա, բնակչությունը – մարդ 1090

Գյուղը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևմտյան մասում, Գյումրիից 6 կմ դեպի հայ-թուրքական սահմանի մոտ: Համայնքի տարածքում կա 7-րդ դարի սահմանային հսկողության եկեղեցիների մնացորդներ: Բնակավայրի հեռավորությունը համայնքային կենտրոնից 12կմ է, ծովի մակերևույթից բարձրությունը 1428մ: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են պտղաբուծությամբ, հացահատիկային, բանջարաբուստանային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ: Հայ-թուրքական սահմանից հեռավորությունը 1 կմ է:

ՂԱՐԻՔՁԱՆՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Վարչական տարածքը -750.0հա, բնակչությունը – մարդ 1014

Գյուղը գտնվում է մարզկենտրոնից 4 կմ հեռավորության վրա, դեպի հարավ, Ախուրյան գետի ձախ ափին, ծովի մակերևույթից 1600 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Ամառը զով է, համեմատաբար խոնավ: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ, անասնապահությամբ, բանջարաբուծությամբ, հացահատիկի և կերային կուլտուրաների մշակությամբ:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ախուրյան համայնքի կազմի մեջ մտնող բոլոր բնակավայրերի բնակիչները ավանդապաշտ և ավանդապահ են՝ միաժամանակ անտարբեր չլինելով նորի նկատմամբ: Ավանդաբար պահպանվել են նվիրվածությունը և հարգանքը ընտանիքի նկատմամբ, հարգանքն աշխատանքի և աշխատող մարդու նկատմամբ: Խոհանոցում պահպանվել են ավանդական ճաշատեսակները, որոնցով շարունակում են պատվել և զարմացնել հյուրերին: Ախուրյան համայնքի բնակչությունը 2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմում է 44951 մարդ (աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերի բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները

(01.01.2022 թ. դրությամբ)

Հ/Հ	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը	Մշտական տնային տնտեսությունների թվաքանակը	Առկա տնային տնտեսությունների թվաքանակը
1	Ախուրյան	9194 մարդ	2408 տ/տ	2248 տ/տ
2	Ազատան	5343 մարդ	1119 տ/տ	1074 տ/տ
3	Մարմաշեն	1897 մարդ	429 տ/տ	361 տ/տ
4	Վահրամաբերդ	1438 մարդ	410 տ/տ	262 տ/տ
5	Մայիսյան	1634 մարդ	518 տ/տ	412 տ/տ
6	Այգաբաց	721 մարդ	181 տ/տ	73 տ/տ
7	Արևիկ	1785 մարդ	428 տ/տ	320 տ/տ
8	Բասեն	1722 մարդ	435 տ/տ	335 տ/տ
9	Կամո	1455 մարդ	332 տ/տ	321 տ/տ
10	Կառնուտ	1015 մարդ	240 տ/տ	194 տ/տ
11	Հովիտ	551 մարդ	136 տ/տ	136 տ/տ
12	Զրառատ	1043 մարդ	242 տ/տ	196 տ/տ
13	Կապս	721 մարդ	189 տ/տ	132 տ/տ
14	Հովունի	654 մարդ	128 տ/տ	111 տ/տ
15	Քեթի	974 մարդ	283 տ/տ	268 տ/տ
16	Փոքրաշեն	220 մարդ	46 տ/տ	41 տ/տ

17	Հացիկ	1020 մարդ	282 տ/տ	245 տ/տ
18	Շիրակ	1075 մարդ	263 տ/տ	196 տ/տ
19	Ջաջուռ	779 մարդ	187 տ/տ	155 տ/տ
20	Կարմրաքար	39 մարդ	16 տ/տ	10 տ/տ
21	Լեռնուտ	157 մարդ	40 տ/տ	27 տ/տ
22	Մեծ Սարիար	382 մարդ	91 տ/տ	76 տ/տ
23	Կրաշեն	267 մարդ	71 տ/տ	63 տ/տ
24	Ջաջուռավան	202 մարդ	61 տ/տ	45 տ/տ
25	Ախուրիկ	1090 մարդ	327 տ/տ	327 տ/տ
26	Հայկավան	1270 մարդ	376 տ/տ	344 տ/տ
27	Առափի	1697 մարդ	470 տ/տ	330 տ/տ
28	Երազգավորս	1526 մարդ	382 տ/տ	376 տ/տ
29	Ոսկեհասկ	2006 մարդ	520 տ/տ	355 տ/տ
30	Բայանդուր	1717 մարդ	168 տ/տ	165 տ/տ
31	Բենիամին	709 մարդ	166 տ/տ	143 տ/տ
32	Գետք	596 մարդ	150 տ/տ	139 տ/տ
33	Ղարիբջանյան	1014 մարդ	256 տ/տ	214 տ/տ
34	Հացիկավան	36 մարդ	18 տ/տ	13 տ/տ
35	Նոր Ախուրյան			

Համայնքի առկա բնակչության թիվը կազմում է 44951 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 22620 և կանայք՝ 22331: Ըստ բնակավայրերի համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Համայնքի առկա բնակչության՝ այդ թվում ըստ համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերի, տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները

(01.01.2022թ. դրությամբ)

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնք	Ախուրյան	Ազատան	Ոսկեհասկ	Մարմաշեն	Արևիկ	Բասեն	Մայիսյան	Առավի	Երազգավորս	Կամո	Վահրամաբերդ	Հայկավան	Շիրակ	Ջրառատ	Ախուրիկ	Հացիկ
1.	Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	6920	2218	710	160	183	251	155	248	150	266	233	205	223	100	88	105	195
	տարիքային և աշխատանքային	5137	1480	556	106	76	216	70	229	112	210	198	179	192	60	65	72	187
2.	Փախստականներ	17	0	1	-	0	0	-	0	0	2	1	1	1	2	0	0	2
3.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	160	24	15	2	6	10	15	2	2	1	5	7	1	3	5	4	3
4.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	4	1	0	-	0	0	-	0	0	0	0	0	1	0	0	0	0
5.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	2625	1214	1000	-	0	0	-	0	150	0	40	89	94	0	0	0	0
6.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	998	14	75	16	51	61	70	53	31	21	30	13	143	45	28	33	24
7.	Հաշմանդամներ, այդ թվում՝	1655	659	130	54	107	35	85	19		56	35	26	31	40	23	8	8

										38								
	Մանկուց հաշմանդամներ	183	19	24	11	4	7	4	1	2	1	-	6	9	10	7	5	6
8.	Աշխատողներ	2779 5	5419	3492	1300	1169	1144	1142	1086	1050	904	951	962	810	702	716	689	660
9.	Զբաղվածներ	17310	2250	2440	658	655	444	603	928	611	520	557	585	623	594	508	521	415
10.	Գործազուրկներ	11224	3169	1052	642	514	700	920	158	439	384	394	377	187	108	208	168	245
11.	Ընտանեկան նպաստների պետական համակարգից օգտվող գրանցված ընտանիքների թիվը	1225	240	103	84	35	37	60	42	36	55	56	44	45	25	30	30	25
12.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	97	28	18	2	3	2	4	2	2	4	4	0	2	3	3	2	0
13.	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը՝այդ թվում՝	768	275	22	2	28	5	2	162	6	3	10		9	80	0	3	15
	անօթևան ընտանիքներ	90	58	0	-	0	0	-	0		0	1		0	2	0		0
14.	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	654	40	40	40	0	5	20	37	25	3	8	1	87	50	0		15
15.	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	4176	870	550	310	195	296	230	28	150	75	90	250	52	50	55	50	105


16.	Արտագնա (սեզոնային) աշխատանքի մեկնողների թիվը	6244	1640	700	550	195	368	256	28	200	150	155	300	60	70	110	92	175
-----	---	------	------	-----	-----	-----	-----	-----	----	-----	-----	-----	-----	----	----	-----	----	-----

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնք	Կառնուտ	Ղարիբջանյան	Քելթի	Ջաջուռ	Այգաբաց	Կապս	Բայանդուր	Բենիամին	Հովունի	Գետք	Մեծ Սարիար	Հովիտ	Կրաշեն	Փոքրաշեն	Ջաջուռավան	Լեռնուտ
1.	Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	6920	201	116	131	101	81	94	129	92	75	119	66	73	52	22	47	20
	տարիքային և աշխատանքային	5137	145	82	112	84	76	81	99	66	61	97	51	44	45	17	38	27
2.	Փախստականներ	17	0	0	0	0	0	5	2	0	0	0	0	0	0	0	0	0
3.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	160	3	6	9	8	2	2	5	3	0	0	0	10	1	0	3	3
4.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	4	0	0	1	0	0	-	0	0	0	0	0	0	0	0	0	1
5.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	2625	0	0	0	0	0	-	0	0	0	0	20	0	20	0	0	0
6.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	998	43	30	12	8	7	4	26	44	2	30	18	6	21	19	11	7
7.	Հաշմանդամներ, այդ թվում՝	1655	56	34	19	17	5	13	30	26	4	22	15	29	7	5	9	7


	Մանկուց հաշմանդամներ	183	5	8	5	10	4	1	0	4	4	3	3	7	2	2	8	1
8.	Աշխատունակներ	2779 5	631	633	307	495	455	474	423	460	320	392	240	346	185	70	113	30
9.	Զբաղվածներ	17310	435	525	111	387	249	376	345	400	190	363	160	468	140	130	54	45
10.	Գործազուրկներ	11224	196	108	196	108	206	98	78	53	200	81	50	31	40	25	69	15
11.	Ընտանեկան նպաստների պետական համակարգից օգտվող գրանցված ընտանիքների թիվը	1225	32	29	24	30	21	14	21	21	8	14	8	27	10	3	13	3
12.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	97	3	1	3	3	0	0	2	3	0	0	1	2	0	0	0	2
13.	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը՝այդ թվում՝	768	13	16	12	48	15	2	0	15	30	18	4	14	3	8	22	
	անօթևան ընտանիքներ	90	0	0	2	11	0	2	0	0	0	0	0	5		9	0	0
14.	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	654	13	16	16	38	13	10	20	1	25	32	10	10	36	15	28	0
15.	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	4176	85	60	120	45	141	55	30	65	70	26	43	60	30	23	6	7
16.	Արտագնա (սեզոնային) աշխատանքի մեկնողների թիվը	6244	100	62	143	67	165	55	40	80	70	196	53	80	35	40	12	5

Հ/հ	Ցուցանիշները	Ընդամենը համայնք	Կարմրաքար	Հացիկական
1.	Կենսաթոշակառուներ, այդ թվում՝	6920	7	
	տարիքային և աշխատանքային	5137	4	
2.	Փախստականներ	17	0	
3.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	160	0	
4.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	4	0	
5.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	2625	0	
6.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	998	2	

7.	Հաշմանդամներ, այդ թվում՝	1655	3	
	Մանկուց հաշմանդամներ	183	0	
8.	Աշխատունակներ	27795	25	
9.	Զբաղվածներ	17310	20	
10.	Գործազուրկներ	11224	5	
11.	Ընտանեկան նպաստների պետական համակարգից օգտվող գրանցված ընտանիքների թիվը	1225	0	
12.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	97	0	
13.	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը՝այդ թվում՝	768	6	
	անօթևան ընտանիքներ	90	0	
14.	Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքների թիվը	654	0	
15.	Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը	4176	4	
16.	Արտագնա (սեզոնային) աշխատանքի մեկնողների թիվը	6244	4	




Սեռային կազմ




■ Տղամարդիկ ■ Կանայք ■ ■

2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը



Գծապատկեր 1. Ախուրյան համայնքի աշխատակազմի կառավարման կազմակերպական կառուցվածքը



Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ) աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 19-ի թիվ 10 որոշումով:

Աղյուսակ 5. Ախուրյան համայնքի Ազատան բնակավայրի «Արփի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքների քանակը	Պաշտոնային դրույքաչափը/ ՀՀ դրամ	Հաստիքային միավորը	Ընդամենը
1.	2	3	4	5	6
2.	Տնօրեն	1	180000	1	180000
3.	Մեթոդիստ, ուս. գծով տնօրենի տեղեկալ	1	110000	1,25	137500
4.	Բուժքույր	1	96000	1	96000
5.	Հաշվապահ	1	100000	1,25	125000
6.	Գործավար	1	96000	0,5	48000
7.	Դաստիարակ	6	110000	6,72	739200
8.	Դաստիարակի օգնական	6	96000	6	576000
9.	Հոգեբան	1	110000	1	110000
10.	Խոհարար	1	96000	1	96000
11.	Խոհարարի օգնական	2	96000	2	192000
12.	Դռնապահ	1	96000	1	96000
13.	Տնտեսվար	1	96000	1	96000
14.	Երաժշտության ղեկավար	1	110000	1,5	165000
15.	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	1	110000	1	110000
16.	Հավաքարար	2	96000	2	192000
	Ընդամենը	27	1598000	28,22	2958700

Աղյուսակ 6. Շիրակի մարզի Ախուրյանի «Կամոյի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքների քանակը	Պաշտոնային դրույքաչափը/ ՀՀ դրամ	Հաստիքային միավորը	Ընդամենը
1	2	3	4	5	6
2.	Տնօրեն	1	130000	1	130000
3.	Մեթոդիստ, ուս. գծով տնօրենի տեղեկալ	1	110000	0,25	27500
4.	Բուժքույր	1	96000	0,5	48000
5.	Հաշվապահ	1	100000	0,5	50000
6.	Դաստիարակ	1	110000	1,12	123200
7.	Դաստիարակի օգնական	1	96000	1	96000
8.	Խոհարար	1	96000	1	96000
9.	Տնտեսվար	1	96000	0,25	24000
10.	Երաժշտության ղեկավար	1	110000	0,25	27500
11.	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	1	110000	0,25	27500
12.	Դռնապահ	1	96000	1	96000
13.	Հավաքարար	1	96000	0,5	48000
	Ընդամենը	12	1246000	7,62	793700

Աղյուսակ 7. Շիրակի մարզի Ախուրյանի «Այգաբաց մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքների քանակը	Պաշտոնային դրույքաչափը/ ՀՀ դրամ	Հաստիքային միավորը	Ընդամենը
1	2	3	4	5	6
2.	Տնօրեն	1	130000	1	130000
3.	Մեթոդիստ, ուս. գծով տնօրենի տեղեկալ	1	110000	0,25	27500
4.	Բուժքույր	1	96000	0,5	48000
5.	Հաշվապահ	1	100000	0,5	50000
6.	Դաստիարակ	1	110000	1,12	123200
7.	Դաստիարակի օգնական	1	96000	1	96000
8.	Խոհարար	1	96000	1	96000
9.	Տնտեսվար	1	96000	0,25	24000
10.	Երաժշտության ղեկավար	1	110000	0,25	27500
11.	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	1	110000	0,25	27500
12.	Դռնապահ	1	96000	1	96000
13.	Հավաքարար	1	96000	0,5	48000
	Ընդամենը	12	1150000	7,62	793700

Աղյուսակ 8. Ախուրյանի «Շուշան մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքների քանակը	Պաշտոնային դրույքաչափը/ ՀՀ դրամ	Հաստիքային միավորը	Ընդամենը
1	2	3	4	5	6
2.	Տնօրեն	1	140000	1	140000
3.	Մեթոդիստ, ուս. գծով տնօրենի տեղեկալ	1	110000	0,25	27500
4.	Բուժքույր	1	96000	0,5	48000
5.	Հաշվապահ	1	100000	0,5	50000
6.	Դաստիարակ	2	110000	2,24	246400
7.	Դաստիարակի օգնական	2	96000	2	192000
8.	Խոհարար	1	96000	1	96000
9.	Տնտեսվար	1	96000	0,5	48000
10.	Երաժշտության ղեկավար	1	110000	0,5	55000
11.	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	1	110000	0,25	27500
12.	Դռնապահ	1	96000	1	96000
13.	Հավաքարար	1	96000	0,5	48000
	Ընդամենը	14		10,24	1074400

Աղյուսակ 9. Ախուրյանի «Արևիկի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքների քանակը	Պաշտոնային դրույքաչափը/ ՀՀ դրամ	Հաստիքային միավորը	Ընդամենը
1	2	3	4	5	6
2.	Տնօրեն	1	140000	1	140000
3.	Մեթոդիստ, ուս. գծով տնօրենի տեղեկալ	1	110000	0,25	27500
4.	Բուժքույր	1	96000	0,5	48000
5.	Հաշվապահ	1	100000	0,5	50000
6.	Դաստիարակ	2	110000	2,24	246400
7.	Դաստիարակի օգնական	2	96000	2	192000
8.	Խոհարար	1	96000	1	96000
9.	Տնտեսվար	1	96000	0,5	48000
10.	Երաժշտության ղեկավար	1	110000	0,5	55000
11.	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	1	110000	0,25	27500
12.	Դռնապահ	1	96000	1	96000
13.	Հավաքարար	1	96000	0,5	48000
	Ընդամենը	14		10,24	1074400

Աղյուսակ 10. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մայիսյանի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքների քանակը	Պաշտոնային դրույքաչափը/ ՀՀ դրամ	Հաստիքային միավորը	Ընդամենը
1	2	3	4	5	6
2.	Տնօրեն	1	140000	1	140000
3.	Մեթոդիստ, ուս. գծով տնօրենի տեղեկալ	1	110000	0,25	27500
4.	Բուժքույր	1	96000	0,5	48000
5.	Հաշվապահ	1	100000	0,5	50000
6.	Դաստիարակ	2	110000	2,24	246400
7.	Դաստիարակի օգնական	2	96000	2	192000
8.	Խոհարար	1	96000	1	96000
9.	Տնտեսվար	1	96000	0,5	48000
10.	Երաժշտական ղեկավար	1	110000	0,5	55000
11.	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	1	110000	0,25	27500
12.	Դռնապահ	1	96000	1	96000
13.	Հավաքարար	1	96000	0,5	48000
	Ընդամենը	14	1256000	10,24	1074400

Աղյուսակ 11. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Քերթի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքների քանակը	Պաշտոնային դրույքաչափը/ ՀՀ դրամ	Հաստիքային միավորը	Ընդամենը
1	2	3	4	5	6
2.	Տնօրեն	1	140000	1	140000
3.	Մեթոդիստ, ուս. գծով տնօրենի տեղեկալ	1	110000	0,25	27500
4.	Բուժքույր	1	96000	0,5	48000
5.	Հաշվապահ	1	100000	0,5	50000
6.	Դաստիարակ	2	110000	2,24	246400
7.	Դաստիարակի օգնական	2	96000	2	192000
8.	Խոհարար	1	96000	1	96000
9.	Տնտեսվար	1	96000	0,5	48000
10.	Երաժշտական ղեկավար	1	110000	0,5	55000
11.	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	1	110000	0,25	27500
12.	Դռնապահ	1	96000	1	96000
13.	Հավաքարար	1	96000	0,5	48000
	Ընդամենը	14	1256000	10,24	1074400

Աղյուսակ 12. Ախուրյան համայնքի Հայկական բնակավայրի «Ալվան ծաղիկ» մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքների քանակը	Պաշտոնային դրույքաչափը/ ՀՀ դրամ	Հաստիքային միավորը	Ընդամենը
1	2	3	4	5	6
2.	Տնօրեն	1	140000	1	140000
3.	Մեթոդիստ, ուս. գծով տնօրենի տեղեկալ	1	110000	0,25	27500
4.	Բուժքույր	1	96000	0,5	48000
5.	Հաշվապահ	1	100000	0,5	50000
6.	Դաստիարակ	2	110000	1.12	246400
7.	Դաստիարակի օգնական	2	96000	1	192000
8.	Խոհարար	1	96000	1	96000
9.	Տնտեսվար	1	96000	0,5	48000
10.	Երաժշտության ղեկավար	1	110000	0,5	55000
11.	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	1	110000	0,25	27500
12.	Դռնապահ	1	96000	1	96000
13.	Հավաքարար	1	96000	0,5	48000
	Ընդամենը	14		8.12	1074400

Աղյուսակ 13. Ախուրյան համայնքի Ոսկեհասկ բնակավայրի «Ոսկեհասկի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքների քանակը	Պաշտոնային դրույքաչափը/ ՀՀ դրամ	Հաստիքային միավորը	Ընդամենը
1	2	3	4	5	6
2.	Տնօրեն	1	140000	1	140000
3.	Մեթոդիստ, ուս. գծով տնօրենի տեղեկալ	1	110000	0,25	27500
4.	Բուժքույր	1	96000	0,5	48000
5.	Հաշվապահ	1	100000	0,5	50000
6.	Դաստիարակ	2	110000	1.12	246400
7.	Դաստիարակի օգնական	2	96000	1	192000
8.	Խոհարար	1	96000	1	96000
9.	Տնտեսվար	1	96000	0,5	48000
10.	Երաժշտության ղեկավար	1	110000	0,5	55000
11.	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	1	110000	0,25	27500
12.	Դռնապահ	1	96000	1	96000
13.	Հավաքարար	1	96000	0,5	48000
	Ընդամենը	14		8.12	1074400

Աղյուսակ 14. Ախուրյանի «Բասենի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքների քանակը	Պաշտոնային դրույքաչափը/ ՀՀ դրամ	Հաստիքային միավորը	Ընդամենը
1	2	3	4	5	6
2.	Տնօրեն	1	150000	1	150000
3.	Մեթոդիստ, ուս. գծով տնօրենի տեղեկալ	1	110000	0,5	55000
4.	Բուժքույր	1	96000	0,75	72000
5.	Հաշվապահ	1	100000	0,75	75000
6.	Դաստիարակ	3	110000	3,36	369600
7.	Դաստիարակի օգնական	3	96000	3	288000
8.	Խոհարար	1	96000	1	96000
9.	Տնտեսվար	1	96000	0,5	48000
10.	Երաժշտության ղեկավար	1	110000	0,75	82500
11.	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	1	110000	0,5	55000
12.	Դռնապահ	1	96000	1	96000
13.	Հավաքարար	1	96000	0,75	72000
	Ընդամենը	16		13,86	1459100

Աղյուսակ 15. Ախուրյանի «Հեքիաթ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքների քանակը	Պաշտոնային դրույքաչափը/ ՀՀ դրամ	Հաստիքային միավորը	Ընդամենը
1	2	3	4	5	6
2.	Տնօրեն	1	160000	1	160000
3.	Մեթոդիստ, ուս. գծով տնօրենի տեղեկալ	1	110000	1	110000
4.	Բուժքույր	1	96000	0,75	72000
5.	Հաշվապահ	1	100000	1	100000
6.	Դաստիարակ	4	110000	4,48	492800
7.	Դաստիարակի օգնական	4	96000	4	384000
8.	Խոհարար	1	96000	1	96000
9.	Տնտեսվար	1	96000	0,5	48000
10.	Երաժշտության ղեկավար	1	110000	1	110000
11.	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	1	110000	0,5	55000
12.	Դռնապահ	1	96000	1	96000
13.	Հավաքարար	1	96000	1	96000
	Ընդամենը	18		17,23	1819800

Աղյուսակ 16. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մարմաշենի Հենրիկ Սերոբյանի անվան մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքների քանակը	Պաշտոնային դրույքաչափը/ ՀՀ դրամ	Հաստիքային միավորը	Ընդամենը
1	2	3	4	5	6
2.	Տնօրեն	1	140000	1	140000
3.	Մեթոդիստ, ուս. գծով տնօրենի տեղեկալ	1	110000	0,25	27500
4.	Բուժքույր	1	96000	0,5	48000
5.	Հաշվապահ	1	100000	0,5	50000
6.	Դաստիարակ	2	110000	2,24	246400
7.	Դաստիարակի օգնական	2	96000	2	192000
8.	Խոհարար	1	96000	1	96000
9.	Տնտեսվար	1	96000	0,5	48000
10.	Երաժշտական ղեկավար	1	110000	0,5	55000
11.	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	1	110000	0,25	27500
12.	Դռնապահ	1	96000	1	96000
13.	Հավաքարար	1	96000	0,5	48000
	Ընդամենը	14	1256000	10,24	1074400

Աղյուսակ 17. Ախուրյանի «Լեռնի անվան մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքների քանակը	Պաշտոնային դրույքաչափը/ ՀՀ դրամ	Հաստիքային միավորը	Ընդամենը
1	2	3	4	5	6
2.	Տնօրեն	1	160000	1	160000
3.	Մեթոդիստ, ուս. գծով տնօրենի տեղեկալ	1	110000	1	110000
4.	Բուժքույր	1	96000	0,75	72000
5.	Հաշվապահ	1	100000	1	100000
6.	Դաստիարակ	4	110000	4,48	492800
7.	Դաստիարակի օգնական	4	96000	4	384000
8.	Խոհարար	1	96000	1	96000
9.	Տնտեսվար	1	96000	0,5	48000
10.	Երաժշտության դեկավար	1	110000	1	110000
11.	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	1	110000	0,5	55000
12.	Դռնապահ	1	96000	1	96000
13.	Հավաքարար	1	96000	1	96000
	Ընդամենը	18		17,23	1819800

Աղյուսակ 18. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ջաջուռի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքների քանակը	Պաշտոնային դրույքաչափը/ ՀՀ դրամ	Հաստիքային միավորը	Ընդամենը
1	2	3	4	5	6
2.	Տնօրեն	1	130000	1	130000
3.	Մեթոդիստ, ուս. գծով տնօրենի տեղեկալ	1	110000	0,25	27500
4.	Բուժքույր	1	96000	0,5	48000
5.	Հաշվապահ	1	100000	0,5	50000
6.	Դաստիարակ	1	110000	1,12	123200
7.	Դաստիարակի օգնական	1	96000	1	96000
8.	Խոհարար	1	96000	1	96000
9.	Տնտեսվար	1	96000	0,25	24000
10.	Երաժշտական դեկավար	1	110000	0,25	27500
11.	Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	1	110000	0,25	27500
12.	Դռնապահ	1	96000	1	96000
13.	Հավաքարար	1	96000	0,5	48000
	Ընդամենը	12	1246000	7,62	793700

Աղյուսակ 19. Ախուրյան համայնքի «Ազատանի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքների քանակը	Պաշտոնային դրույքաչափը/ ՀՀ դրամ	Հաստիքային միավորը	Ընդամենը
1	2	3	4	5	6
2.	Տնօրեն	1	170000	1	170000
3.	Փոխտնօրեն	2	100000	2	200000
4.	Հաշվապահ	1	130000	1	130000
5.	Գործավար	1	100000	1	100000
6.	Գրադարանավար	1	100000	1	100000
7.	Հավաքարար	2	96000	2	192000
8.	Դաշնամուրի դասատու	3	100000	3	300000
9.	Զուլթակի դասատու	1	100000	1	100000
10.	Կլարնետի դասատու	1	100000	1	100000
11.	Ժող. գործիքների դասատու	4	100000	4	400000
12.	Վոկալի դասատու	1	100000	1	100000
13.	Տեսաբան	2	100000	2	200000
14.	Նկարչության դասատու	2	100000	2	200000
15.	Գործելնի դասատու	1	100000	1	100000
16.	Պարուսույց	5	100000	5	500000
17.	Թատերական արվ. խմբավար	1	100000	1	100000
18.	Ֆուտբոլի խմբավար	1	100000	1	100000
	Ընդամենը	30	1246000	30	2900000

Աղյուսակ 20. Ախուրյան համայնքի «Ախուրյանի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքի քանակը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ	Ամսական աշխատավարձ ընդամենը/ ՀՀ դրամ	Տարեկան աշխատավարձի ֆոնդ
1	2	3	4	5	6	7
2.	Տնօրեն	1	1	170000	170000	2040000
3.	Հաշվապահ	1	1	110000	110000	1320000
4.	Մեթոդիստ	1	1	100000	100000	1200000
5.	Գրադարանավար	3	1	100000	300000	3600000
6.	Կազմարար	1	1	100000	100000	1200000
7.	Հավաքարար	1	1	100000	100000	1200000
8.	Ախուրյանի մշակույթի տան հավաքարար	1	1	100000	100000	1200000
9.	Ախուրյանի մշակույթի տան պահակ	1	1	100000	100000	1200000
10.	Գրադարանավար Արևիկ բնակավայրում	1	0,5	100000	50000	600000
11.	Գրադարանավար Այգաբաց բնակավայրում	1	0,5	100000	50000	600000
12.	Ակումբավար Արևիկ, Այգաբաց, Հովիտ, Բասեն, Կառնուտ բնակավայրերում	5	2,5	100000	250000	300000
13.	Գրադարանավար Ազատան բնակավայրում	1	1	100000	100000	1200000
14.	Ակումբավար Առափի բնակավայրում	1	1	100000	100000	1200000
15.	Ակումբավար Բայանդուր բնակավայրում	1	1	100000	100000	1200000
16.	Գրադարանավար Բայանդուր բնակավայրում	1	1	100000	100000	1200000
17.	Ակումբավար Բենիամին բնակավայրում	1	1	100000	100000	1200000

18.	Գրադարանավար Երազգավորս բնակավայրում	1	1	100000	100000	1200000
19.	Գրադարանավար Հայկական բնակավայրում	1	1	100000	100000	1200000
20.	Ակումբավար Հայկական բնակավայրում	1	1	100000	100000	1200000
21.	Գրադարանավար Ղարիբջանյան բնակավայրում	1	1	100000	100000	1200000
22.	Ակումբավար Վահրամաբերդ բնակավայրում	1	1	100000	100000	1200000
23.	Ակումբավար Մարմաշեն բնակավայրում	1	1	100000	100000	1200000
24.	Ակումբավար Լեռնուտ բնակավայրում	1	1	100000	100000	1200000
25.	Ակումբավար Մայիսյան բնակավայրում	1	1	100000	100000	1200000
26.	Գրադարանավար Ոսկեհասկ բնակավայրում	1	1	100000	100000	1200000
27.	Համակարգչային օպերատոր	1	1	100000	100000	1200000
28.	Տնտեսվար	1	0,5	100000	50000	600000
	Ընդամենը	33	27	2780000	2980000	35760000

Աղյուսակ 21. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Վահրամաբերդի երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հ/հ	Հաստիքի անվանումը	Հաստիքի քանակը	Հաստիքային միավորի դրույքաչափը/ ՀՀ դրամ	Սահմանված դրույքաչափը/հաստիքի քանակի նկատմամբ	Ընդամենը
1	Տնօրեն	1	130000	1	130000
2.	Հաշվապահ	1	100000	0,75	75000
3.	Մանկավարժ	5	100000	6	600000
4.	Հավաքարար	1	100000	0,25	25000
	Ընդամենը	8	435000	8	830000

Աղյուսակ 22. Ախուրյան համայնքի «Արևիկի երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հ/հ	Հաստիքի անվանումը	Հաստիքի քանակը	Հաստիքային միավորի դրույքաչափը/ ՀՀ դրամ	Սահմանված դրույքաչափը/հաստիքի քանակի նկատմամբ	Ընդամենը
1	Տնօրեն	1	150000	1	150000
2.	Հաշվապահ	1	100000	1	100000
3.	Մանկավարժ	6	100000	4,9	490000
4.	Հավաքարար	1	100000	0,5	50000
	Ընդամենը	9		7,4	790000

Աղյուսակ 23. Ախուրյան համայնքի «Ախուրյանի համալիր-մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքի քանակը	Հաստիքային միավորը	Սահմանված դրույքը /ՀՀ դրամ	Սահմանված դրույքափոր /ՀՀ դրամ	Ընդամենը
1	2	3	4	5	6	7
2.	Տնօրեն	1	1	1	180000	180000
